

ԱՃՈՒՄՆ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԵՒՐՈՊԵՈՑ



(Շարումակութիւմ. Տես էջ 34)

Ներկայ ժամանակներս՝ մարդկութեան նուազելուն յայտնի պատճառաց մէջ գլխաւոր տեղին կը զբաւեն, զոր ամէնքը գիտեն, և վերջնական ըմպելեաց զեղծումն և զազդիական ւխտն: Ահաւոր է յիրաւի ասոնց ըրած կոտորածն և շատ փնասակար ժողովրդոց անման, որք պատերազմաց և համաճարակ հիւանդութեանց կոտորածէն աւելի փնաս կը բերեն մարդկութեան:

Այս բանս յայտնի կ'ըլլայ, եթէ մտածենք որ հաւանականաբար զինին քանի մի միլիոն հարիւրաւոր քեր կ'ընծայէ, յորոց ոմանք աւելի կամ նուազ թուանաւոր լինելով, մարդու մարմնոյն կազմութիւնը կը խանգարեն. ուստի և կը պատճառեն սուր և երկարատե հիւանդութիւնք, յիմարութիւնք, անձնասպա, նութիւնք և յանկարծական մահեր՝ մասնաւոր աշխատաւորաց դասուն մէջ, որք 'ի բնէ կորովի կազմութիւն կ'ունենան: Սաստիկ զեղծումն ըմպելեաց կը զսնենք 'ի Փաղղիա, 'ի Պելճիա, 'ի Հոլանտա, 'ի Մեծն Բրիտանիա՝ 'ի Գերմանիա և 'ի Միացեալ Նահանգս Սմերիկոյ: «Ալքոհլ և արդի քաղաքականութեան զապաւարն, կ'ըսէ Կողդիոս Ժաննէ, սերտ՝ այլ ոչ բնական կապանք կցորդեալ են իրերաց հետ. և եթէ ապագայ պատմիչք իւրաքանչիւր դարուն քաղաքական կնիք մի ուզեն տայ, մերն կրնայ կոչուիլ իրաւամբ զոր ոչո՛րէ՛ք»: Իւր այս խօսքին ճշմարտութիւնը ցուցնելու համար՝ նկատմամբ Փաղղիոյ կ'ըսէ, թէ 1875ին վերջերս կապելայից թիւն էր 315 529, և յետ տասն ամաց և22 500 ի հաւսեր էր. իսկ Մարսիլիա, որ 25 տարի առաջ գրեթէ զուրկ էր յալքուրական ըմպելեաց, 1887ին 3 900 ըմպելեաց կապելայ ունէր, և այնչափ բազմացեր էր քաղաքին մէջ մտելոց, անձնասպանից և մեռեալ ծնելոց թիւն, որ կ'ահաբեկէր զմարդ: Եւ զժբաղդաբար օր ըստ օրէ կ'ընդարձակի այս ախտս, որ խիտ վրնասակար է մարմնոց կազմութեան և առողջութեան. և եթէ փութով չչարմանուի, կարելի է որ ժողովրդոց անունն երրորդ մասամբ մի նուազի:

Սակայն ժողովրդոց անման աւելի մեծ արգելքն է զազդիական ախտն, որ արդ մարդկութեան մեծ մասին արիւնը կ'ապականէ և հետեաբար յալքող սերունդեան կ'անցնի. ուստի քան ամէն հիւանդութիւն և ծանտամահ փնասակար է սա, վասնզի մարդկային անման հիմը կը խանգարէ:

Այս ամէն պատճառներս՝ որ մարդկանց կամփէն և կրէն առաջ կու գան, ազգահամար վիճակագիրներու հաշիւները, դրութիւնքը և օրէնքները կը լրեն. դարձեալ աւելի ևս անհիմն և երկարյական կը լինի անոնց հաշիւն, եթէ մտածենք որ այչափ հարուածոց վրայ կը զսնենք ևս քանի մի ազգաց մէջ ամուսնութեան կամար անորգաստորութիւնն, որով արդէն իսկ կը հիւծի Փաղղիոյ կեանքն: Այսու յայտնի կը լինի, թէ ապագային ինչդիրն սերտ կցորդութիւն մ'ունի բարոյականութեան կարգին հետ, որ առանց կրօնից անհնարին է: Սակայն այն խնդրոց մէջ մեծ նշանակութիւն ունի ևս տնտեսական մասն. վասն զի ոչ միայն ևս արտից բարոյական ապականութիւնն, այլ և աղքատութիւնն իսկ պատճառ է կազմութեան խանգարման:

Որովհետև այժմեան պետութիւնք զօրաց մեծամեծ բանակներ կը պահեն և անոր համար արտազոյ կարգի ծախքեր կը ստիպուին ընել, ուստի և հետեալաբար նորանոր հարկերով և տուրքերով ժողովրդեան վրայ կը ծանրանան, և

այսպէս օրէ օր մեծաւանց համար կը դժուարի կենաց վիճակն, բարեկեցիկը կաղքատանան և աղքատը չքարութեան մէջ կը տուայտին: Այս դիտմամբ պէտք է խորհրդածութեան անուով Միացեալ Նահանգաց, Հնդկաստանի, Աւստրալիոյ մրցանքն՝ թէ՛ մշակութեան բերքով և թէ՛ ձեռագործ և մեքենական նարտութեամբ, որք կարող են Եւրոպիոյ վաճառականութեան և ձեռագործ արուեստից մեծ հարուած մի տալ, ինչպէս ունեցան ԺՉ և ԺԻ դարուց մէջ Իտալիա և Սպանիա: Եւ այժմէն իսկ նրբահանճար անտեսագէտք՝ որոց գլուխն է Լըրուա-Պօլիէօ (Leroy-Beaulieu), կը նախատեսեն Նոյնպիսի վախճան մը Փաղղիոյ, Պերճիոյ, Պերսիանիոյ և Նոյն իսկ Մեծին Բրիտանիոյ:

Ընկերական ապականութեան մեծ աղբիւր մ'է նաև հրէական ցեղն, որ անյազարար կ'աւերէ քրիստոնեայ աղքատ հարստութիւնքը, յորս կատարեալ ազատութիւն կը վայելէ: շատ փաստակար է այս, զոր վիճակագիրք մտադիրուած թեամբ չեն նկատեր: Կը պատմուի, թէ օր մի այս ազգին կրօնասնորէն մին յանկարծ բերնէն դուրս հանեց, թէ՛ Մենք քրիստոնէից միայն երկու աչքերն պիտի թողունք արտասուելու համար. և յիրաւի այս է իրենց միակ նպատակն: Հրեայք շնորհիւ յեղափոխութեանց կատարեալ հաւասարութիւն ստացան քրիստոնէից հետ օրինաց աւել, իսկոյն անոնց ստացուածները ձեռք ձգեցին, և երկրին մեծ մասին տէր եղան, երբ Միջուցեան այն նախկին օրէնքներն՝ որ կը պաշտպանէին զհրեայք քրիստոնէից բարկութենէն, և զքրիստոնեայս հըրէից վաշխառու յափշտակութիւններէն:

Ահա օրինակն Փաղղիոյ, ուր մի դարու մէջ հրեայք ազատութիւն ստանալով 40 000 միլիոն կլլեցին ազգին անշարժ ստացուածներէն, որ 200 000 միլիոն կը համարուի: Իտալիոյ մէջ կան գաւառներ, որոց չորս հինգերորդն սակաւաթիւ հրեայք ստացան երեսնամեայ ազատութեամբ, և այլ չորս հինգերորդ մի ևս իբր անշարժ գրաւ (hypothèque): Բայց շատ աւելի ազգու է Աւստրիա-Հունգարիոյ օրինակն, որ գրեթէ բոլորովին հրէութենէ ապականեալ է:

Անոնց սերունդն տասն ամաց մէջ 2, 07 առ հարիւր աճեցաւ: մինչդեռ 1869 տարւոյն մէջ 1, 154, 000 անձինք էին, իսկ այժմ 1, 648, 708: Երբ 1862ին ազատութիւն ստացան երկրատէր լինելու, սուղ ժամանակի մէջ Իտալիա ընտանիքն՝ Պոհեմիոյ չորրորդ մասը ձեռք ձգեց, որ հին ժամանակները վաթսուէն աւելի արքունական ընտանեաց ստացուածներ էին. և Հունգարիոյ մէջ Հրեայք այնպիսի իշխանական կալուածներ ունին, որ մեծ կալուածատեարց վերսպահեալ ընտրութեանց մէջ չորրորդ մասէն աւելի իրենք կը վայելին: օրինակ իմն, Կէիւարա կոմսութեան կէսն արդ Պոլիէլ հրէին կը վերաբերի: Այլ քան գամէնն աւելի ցաւալի է Կալիցիոյ վիճակն, ուր 20 ամաց մէջ Հրեայք 80 առ հարիւր երկրին տէր եղան և հետզհետէ կը գնեն այն կալուածները և ստացուածները, որք աճորդի կը հանուին՝ տուրքերը վճարելու անկարող լինելով: Եթէ այսու օրինակաւ յառաջադիմեն, սուղ ժամանակի մէջ 2 միլիոն օտար վաշխառուք պիտի մերկացնեն ՚ի ժառանգութեանց 40 միլիոն աւստրիացիները, որք հիւրընկալութեամբ շնորհեցին անոնց քաղաքական հաւասարութիւն: Եւ բաւական չէ հարստութեամբ մեծանալն, այլ տէրութեան մէջ իսկ բարձրագոյն տեղի մի կը գրաւեն ազատական և բարձր արուեստից մէջ: Համալսարանաց մէջ երրորդ մասամբ հրեայ ուսուցիչներ են, և 1886 ին՝ 3413 աշակերտաց մէջ 2093 հրեայք էին:

Այս ամէնն նկատմամբ անշարժ ստացուածոց: իսկ արծաթն և ոսկին, գործի ամենազօր վաշխառութեան, բովանդակ Եւրոպիոյ մէջ գրեթէ հրէին ձեռքը կ'անցնի: Տէրութեանց պարտքերն, ամենամեծ ընկերութիւնք երկաթուղաց, վաճառականութեան, ձեռագործ արուեստից, արժէթղթոց առևտուրն, գրա-

մասեղանք, և ուրիշ որ և է շահաւոր և արգասաւոր գործեր հրէական ազգին համար միայն կը պտղաբերեն: Եւ այսպէս ահա ամենայն ող կարող է գուշակել, թէ հրէական վախճանութեան անյազ ցանկութիւնն և տիրապետութիւնըն որսիսի հանրական աղքատութիւն կը սպառնայ Եւրոպիոյ. ուստի և կարևոր կը տեսնուի սանձ դնել անոնց և նորոգել նախնի օրէնքները, զորս 'ի վնաս ընկերութեան խափանեցին տէրութիւնք:

Այսպիսի համառօտ տեսութեամբ ահա կը տեսնուի, թէ որչափ ունայն գրութիւն և կարծիք է վիճակագրաց ապառնոյն վրայ ընծայած հետեւանքն. և ինչպէս որ կարելի չէ պատասխանել հարցմանս, թէ որչափ պիտի լինի Եւրոպիոյ ժողովուրդն յետ յիսուն կամ հարիւր ամաց. նոյնպէս առաւել ևս անհնարին է հետեւեալն, թէ ինչ պիտի լինի իւր քաղաքական և անտեսական վիճակն: Միակ ստոյգ պատասխանն է, թէ երկուց ևս լուծումն Աստուած գիտէ. և կամ ուրիշ բառերով. Ապառնին 'ի ձեռս Աստուծոյ է:

Սակայն անտարակոյտ կրնանք հաստատել, թէ մարդկային ընկերութիւնն պիտի յառաջադիմէ 'ի բարին և 'ի լաւագոյնն և պիտի զարգանայ յամենայնի, եթէ կրօնից բարեբար ազդեցութեան հետեոյ լինի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ԸՆԹՈՏՔ ԳԱՂՂԻԵՐԵՆԷ Ի ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա - Ե

ՅՕՐԻՆՆՑ

ՈՍԿԵԱՆ Ա. ԿՈՄԻՏԱՍ

Կ. ՊՕԼԻՍ. ՏՊՐ. Յ. ԳԱՂԱՅԵԱՆ

Տ Ա Ր Ե Ր Ք

Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ե Ա Ն

Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ե Ւ Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն

Ե Ր Կ Ա Ս Ի Ր Ե Ս Ց

Զ. ՄԱՆՈՒԲԵԼ Գ. ՔԱՋՈՒՆՅՐ

Ի ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒՍՏԷՆ